ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Սպիտակ **14/ 05/2024**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Մանուշ Աթյանը, Աննա Ալթունյանը, Արկադի Ասատրյանը, Սասուն Ասատրյանը, Վաչիկ Գրիգորյանը, Կարինե Դիլաքյանը, Նարինե Հակոբյանը, Վահե Ղազարյանը, Համլետ Մազմանյանը, Գևորգ Մարգարյանը, Վարազդատ Մխիթարյանը, Գագիկ Սահակյանը, Արամայիս Փիլոյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Քաջայր Նիկողոսյան, Հովիկ Հովհաննիսյան, Ազգանուշ Ֆրանգյան, Վարուժան Ապրեսյան, Երեմ Գրիգորյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Քաջայր Նիկողոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Ազգանուշ Ֆրանգյանը

Համայնքի ղեկավարի տեղակալ Արտակ Մաթոսյանը հանդես եկավ նախաձեռնությամբ, օրակարգին ևս մեկ հարց ավելացնելով: Նախաձեռնությունը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Լսեցին
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1 . Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 14-ի հերթական նիստի օրակարգը.

1)Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 139-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/Զեկուցող՝ Վ.Ապրեսյան/

2)«Սպիտակ համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին

/զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

3) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

4) 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Նաիրի Նորիկի Մկրտչյանի ընտանիքի կազմը և բնակելի տուն ունենալու փաստը հաստատելու մասին

/զեկուցող՝ Ն.Յարմալոյան/

5)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

6)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

7) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի թիվ 59-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին

/զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

8)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-095-0068-0022 կադաստրային ծածկագրով հողամասն աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

9)«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը անշարժ գույք նվիրելուն համաձայնություն տալու մասին

/զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

10)Ղուրսալի ԱԿԽ-Ի հանքավայրի Ղուրսալի-3 տեղամասի փակման աշխատանքների իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին

/զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

11)Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրում ժամանցային համալիրի կառուցման իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին

/զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

12)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքը ներառող միկրոռոգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը հաստատելու մասին

/զեկուցող՝ Ա.Մաթոսյան/

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 58/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 139-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ԶԵԿ. ՎԱՐՈՒԺԱՆ ԱՊՐԵՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի «Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 139-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59/

Լսեցին

«ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասով, 11-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Կանոնադրության 1.12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1.12. Հաստատության գտնվելու վայրն է 1801, Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Շահումյան փողոց 7: Հաստատությունը գործունեություն է իրականացնում նաև Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Նոր Խաչակապ 2-րդ փողոց 26/1 գրասենյակ հասցեում»:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-Ի ԹԻՎ 98-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 98-Ա որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ որոշման հավելված 1-ը և հավելված 2-ը հաստատել նոր խմբագրությամբ:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61/

Լսեցին

1988 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԻՐԻ ՆՈՐԻԿԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱԶՄԸ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ ՈՒՆԵՆԱԼՈՒ ՓԱՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՅԱՐՄԱԼՈՅԱՆ/

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի նոյեմբերի 13-ի թիվ 1337-Ն որոշման հավելվածի 9.1-ին կետի՝ հիմք ընդունելով Նաիրի Նորիկի Մկրտչյանի դիմումը, Դրաստամատ Խաչիկի Պողոսյանի, Թաթուլ Արշալույսի Նազարյանի հայտարարությունները, անձնագրերը, ամուսնության վկայականը, ծննդյան վկայականները՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1.Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի բնակիչ Նաիրի Նորիկի Մկրտչյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ բաղկացած է եղել վեց անձից.
Նաիրի Նորիկի Մկրտչյան՝ ծնված 26.08.1982 թվականին,
Վահան Նիկոլի Մկրտչյան՝ ծնված 01.11.1929թվականին, մահացած 09.06.2016թ.,
Սերվենիկ Բաղդասարի Ղազարյան՝ ծնված 05.11.1932թվականին, մահացած 24.10.1999թ.,
Նորիկ Վանիկի Մկրտչյան՝ ծնված 02.01.1959 թվականին,
Ցողիկ Եղիշեի Մկրտչյան՝ ծնված 10.01.1959 թվականին,
Նելի Նորիկի Մկրտչյան՝ ծնված 20.12.1984 թվականին:

2.Հաստատել այն փաստը, որ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի Գեղասար բնակավայրի բնակիչ Նաիրի Նորիկի Մկրտչյանի ընտանիքը 1988 թվականի դեկտեմբերի 7-ի դրությամբ Գեղասար գյուղում ունեցել է բնակելի տուն, որը երկրաշարժի հետևանքով քանդվել է:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 62/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23022024-06-0058 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1.Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Լուսաղբյուր 7 հողամաս» հասցեում գտնվող, 06-046-0220-0016 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,34975 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, սառնարանային տնտեսություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 2 285 266,5 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 653,4 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Ավագանու անդամ Վարդուհի Թումանյանը ձեռնպահ քվեարկեց հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 63/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 26022024-06-0030 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Սպիտակ գյուղ Լուսաղբյուր 8 հողամաս» հասցեում գտնվող, 06-046-0220-0020 կադաստրային ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության 0,34975 հեկտար մակերեսով գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, չորանոց կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 2 285 266,5 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 653,4 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Ավագանու անդամ Վարդուհի Թումանյանը ձեռնպահ քվեարկեց հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 64/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 30-Ի ԹԻՎ 59-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավականակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի մայիսի 30-ի «Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող 06-095-0268-0022 կադաստրային ծածկագրով հողամասն աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին» թիվ 59-Ա որոշումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Ավագանու անդամ Վարդուհի Թումանյանը ձեռնպահ քվեարկեց հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 65/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-095-0068-0022 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 14042017-06-0040 վկայականը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող «Մարզ Լոռի, համայնք Ջրաշեն 8-րդ փողոց 32/3 հողամաս» հասցեում գտնվող 06-095-0068-0022 կադաստրային ծածկագրով 0,19 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, հանդիսությունների սրահ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:
2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 1 504 800,00 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 792 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի չափագրման և պետական գրանցման ծախսերը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Ավագանու անդամ Վարդուհի Թումանյանը ձեռնպահ քվեարկեց հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 66/

Լսեցին

«ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ» ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՐԵՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 06052016-06-0062 վկայական)՝ Մարզ Լոռի, Սարահարթ 2 փողոց 19 հասցեում գտնվող, 06-097-0018-0022 կադաստրային ծածկագրով 0,06272 հեկտար մակերեսով հողամասը և 142,9 քառակուսի մետր մակերեսով եկեղեցին «Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցի» կրոնական կազմակերպությանը նվիրելուն:

Կողմ-12 Դեմ-0 Ձեռնպահ-2

Ավագանու անդամներ Վարդուհի Թումանյանը և Նունե Էհտիբարյանը ձեռնպահ քվեարկեց հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 67/

Լսեցին

ՂՈՒՐՍԱԼԻ ԱԿԽ-Ի ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՂՈՒՐՍԱԼԻ-3 ՏԵՂԱՄԱՍԻ ՓԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱԶԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի, հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 3-ին Սպիտակ համայնքի Արջիովիտ բնակավայրում տեղի ունեցած հանրային լսման արձանագրությունը՝

1.Համաձայնություն տալ «Ռուբեն և Էդվինա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից նախատեսվող, Ղուրսալի ԱԿԽ-ի հանքավայրի Ղուրսալի-3 տեղամասի փակման աշխատանքների իրականացմանը:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-5

Ավագանու անդամներ Վարդուհի Թումանյանը, Սամվել Սիմոնյանը, Զալիկո Համբարյանը, Սարգիս Փիլոյանը և Ռաֆայել Սիմոնյանը ձեռնպահ քվեարկեցին հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 68/

Լսեցին

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՋՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԺԱՄԱՆՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՋԳԱՆՈՒՇ ՖՐԱՆԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասով, համաձայն ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգի 28-րդ կետի, հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 23-ին Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրում տեղի ունեցած հանրային լսման արձանագրությունը՝

1.Համաձայնություն տալ Ռուբեն Գրիգորյանի կողմից նախատեսվող, Սպիտակ համայնքի Արջհովիտ բնակավայրի 14-րդ փողոց թիվ 2 հողամասում ժամանցային համալիրի կառուցմանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-1

Ավագանու անդամ Սարգիս Փիլոյանը ձեռնպահ քվեարկեց հարցին:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 69/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԸ ՆԵՐԱՌՈՂ ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԼՈՌԻ-4 ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 . 4-րդ հոդվածի 7-րդ մասով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2-10 դրական եզրակացությունը՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ (Սպիտակ քաղաք, Արջհովիտ, Արևաշող, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրակամուտ, Ջրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարածոր) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Լոռի-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագիծը՝ գոտևորման մասով:

Կողմ-14 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70/

Ավագանու անդամներ

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ

ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ

ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ

ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ

ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՓԻԼՈՅԱՆ

ԿԱՐԵՆ ԳԱՍՈՅԱՆ

Համայնքի ղեկավար

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Ազգանուշ Ֆրանգյանը